CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստան

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՅՈԹ ՐՈՊԵ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանյան ինստիտուտների գործունեությունը գնահատելու համար Կովկասյան բարոմետր (ԿԲ) համազգային ներկայացուցչական հետազոտությունը խիստ օգտակար տվյալներ է պարունակում: Հանրային վստահությունը չափելու համար՝ հարցվողներին առաջարկվում է 5-բալանոց սանդղակ: 2024-ի ԿԲ տվյալների համաձայն՝ հարցվածների միայն 12%-ն է անվստահություն հայտնել Եկեղեցու նկատմամբ, մինչդեռ **79%**-ը՝ վստահում է հաստատությանը: Վստահությունը 2011-2019 թվականների ընթացքում բավականին կայուն դիրքերում է եղել (75-80%-ի միջակայքում), կտրուկ նվազել է 2021 թվականին (34%), ապա աճել՝ հասնելով 79%-ի 2024 թվականին:

Վստահությունը դավանած կրոնի հաստատության նկատմամբ (%)



Ուստի, մենք որոշեցինք փոքր-ինչ ավելի «մոտիկից» զննել, թե ինչպես են մարդիկ տարբերվում վստահության-անվստահության սպեկտրի վրա՝ ոչ թե սոցիալ-դեմոգրաֆիական ցուցանիշներով, այլ՝ վստահության դրսևորումներին ուղեկցող **արժեքային կողմնորոշումների** և **սպասումների** տեսանկյունից:

Ի՞նչ պարզեցինք.

Տվյալները հուշում են, որ կրոնական հաստատությանը **վստահողներն** ավելի հակված են այն տեսակետին, որ **պետությունը ծնողի նման** պետք է հոգ տանի մարդկանց մասին (73.9%): Մինչդեռ, **չվստահողները** համեմատաբար ավելի հակված են (32.0%՝ ի տարբերություն վստահողների 18.4%-ի) հավանություն տալ **քաղաքացիների հաշվետվողականության մոդելին**՝ պետությունը դիտարկելով որպես քաղաքացիներին հաշվետու «վարձու աշխատող»:



Ավելին, Եկեղեցուն **չվստահողներն** ավելի հակված են (26.3%՝ ի տարբերություն վստահողների 16.2%-ի) համաձայնելու, որ **իրավիճակը Հայաստանում երբեք չի լավանա**: Չվստահողները նաև ավելի քիչ հակված են ընտրել լավատեսական այն պնդումը, ըստ որի՝ վերջի-վերջո ամեն ինչ Հայաստանում լավ կլինի (71.6%՝ ի տարբերություն վստահողների 81.5%-ի):



Ի՞նչ է ստացվում.

Տվյալները ցույց են տալիս, որ Եկեղեցու (ավելի լայն իմաստով՝ սեփական կրոնական հաստատության) նկատմամբ վստահությունը **պարզապես հավատամքային վերաբերմունք չէ**: Այն նաև արտացոլում է **իշխանության**, **պատասխանատվության և հասարակական կարգի** նկատմամբ ավելի խորքային կողմնորոշումները: Եկեղեցուն վստահողներն առավել հակված են պետությանն ընդունել որպես պաշտպանիչ և կայունացնող գործոն, մինչդեռ չվստահողները ավելի հակված են հաշվետվողականության վրա հիմնված, պայմանագրային սպասումներ ձևավորել այն մասին, թե ինչպես պետք է գործի պետությունը:

Նմանօրինակ բաժանում դրսևորվում է նաև հասարակական անորոշության նկատմամբ դիրքավորվելու առումով. Եկեղեցու նկատմամբ **վստահությունն** փոխառնչակցված է ավելի բարձր **լավատեսության** հետ, մինչդեռ **անվստահությունը**՝ համեմատաբար ավելի բարձր **հոռետեսության**: Գործնականում Եկեղեցու հանրային լեգիտիմությունը միահյուսված է ավելի լայն հասարակական հակընդդեմության հետ՝ հիերարխիկ բարոյական իշխանության և լիբերալ-դեմոկրատական հաշվետվողականության սպասումների միջև: Երբ այս հակընդդեմությունն ուշադիր չի վերահսկվում, Եկեղեցու նկատմամբ վստահությունը կարող է ապակայունանալ և քաղաքականացվել:

Վերապահում.

Հաշվի առնելով ներկայում ընթացող սոցիալ-քաղաքական գործընթացները և թեմայի շուրջ տեղեկատվական դաշտում առկա ոչ միանշանակ և երբեմն մանիպուլյատիվ թեզերը՝ ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամը գիտակցված կերպով ձեռնպահ է մնում այս համառոտագրի շրջանակներում որևէ կոնկրետ առաջարկ կամ հուշում ձևակերպելուց և խրախուսում է տվյալահեն, հավասարակշռված և կառուցողական երկխոսությունը հանրության, պետության և սոցիալական ինստիտուտների, այդ թվում՝ Եկեղեցու միջև:

Հրապարակումը հեղինակել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը՝ «Հայաստանի զարկերակը. միահյուսելով տվյալները արվեստին» ծրագրի շրջանակներում, «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան ֆինանսական աջակցությամբ: Հիմնարկութեան կողմից աջակցությունը չի ենթադրում հավանություն այս հրապարակման մեջ արտահայտված կամ օգտագործված որևէ կոնկրետ կարծիքի, տեսակետի կամ մոտեցման նկատմամբ: Հրապարակումը հիմնված է կշռված առաջնային տվյալների վրա, որոնք հավաքագրվել են Կովկասյան բարոմետր ազգային ներկայացուցչական հարցման շրջանակներում: